

# Արեւմտահայ բռնագրաւուած հողերու հարցը

1921 - 1971 թ. թ.

ԶԱԻՆ ՄՍԸՐԼԵԱՆ

## ՄՈՒՏԳ

Բազրատունեաց հայկական թագաւորութեան ու իր մայրաքաղաք՝ Անիի անկումով, 1045 թուին, Հայ ժողովուրդը կը կորսնցնէր իր պետականութիւնը, մանաւանդ Մեծ Հայքի շրջանին մէջ, եւ կացութիւնը այդպէս կը մնար՝ քանի մը կիսանկախ կամ ինքնավար իշխանապետութիւններու պարբերական գոյութեամբ, մինչեւ Սարգարապատի հերոսամարտի բախտորոշ օրերուն:

Բիւզանդական տիրապետութեան կարճատեւ շրջանէ մը ետք կը սկսէին սելճուք թուրքերու արշաւանքները ու հայկական հողամասերու բռնագրաւումը, ջարդերը ու ապահովութեան ի խնդիր հայոց զանգուածային գաղթերը կամ տեղափոխութիւնները Փոքր Ասիոյ տարածքին եւ այլուր: Թուրք պատմագիրներու իսկ խոստովանութեամբ 1048-1085 թթ. հայկական քաղաքներու եւ գիւղերու զրաւումը, թալանն ու «մաքրադործումը» տեղի կ'ունենար (1):

1071 թ.ին, Մանազկերտի մէջ Բիւզանդիոնի կրած ծանր պարտութիւնը Սելճուքեան տիրապետութեան կ'ենթարկէր Հայաստանը, որուն արեւելեան մասին մէջ հաստատուած Չաքարեան իշխանապետութիւնը 1236 թ.ին մոնղոլ հորդաներու կողմէ կը

1. Yinanc, Mukrimin Halil, Türkiye Tarih Selcuklular Devri, Anadolu Fethi, Istanbul Universitesi Yayinlari, No. 240, Istanbul, 1944, pp. 188-191.

ընջուէր: Թէեւ Կիլիկիոյ մէջ Հայկական պետութիւն մը կը կազմակերպուէր ու Հայ պետականութիւնը հոն կը տեւէր մինչեւ 1375 թ., եւ 1425 թ.ին վերջնականապէս կը չիջէր: Պատմական Հայաստանի հողամասը այս անգամ թուրք, թաթար, ու մոնղոլ այլազան ցեղախումբերու արշաւանքներուն ու տիրապետութեանց կ'ենթարկուէր: Օսմանեան Սուլթան Սելիմ Ա.ի (1512-20) օրով էր որ (1514 թ.) Հայաստան՝ Մալաթիայէն մինչեւ Ուրմիոյ լիճի Հասնոյ շրջանը կ'ենթարկուէր թուրքիոյ: 1555 թ.ին Սուլթան Սուլէյմանի եւ Պարսից Շահ Թահմասպի միջեւ կնքուած Ամասիոյ դաշնագրով Հայաստանի մեծ մասը կը մնար Օսմանեան տիրապետութեան: Նորանոր դաշինքներ՝ Տիարպեղիբի (1639 թ.), թուրք-պարսկական (1746 թ.) նոր նուաճումներ կը նշանակէին Օսմանեան կայսրութեան համար ու Հայապատկան հողեր տէր կը փոխէին:

Օսմանեան կայսրութիւնը չէր գոհանար միայն Հայապատկան հողերու վրայ իր տիրապետութեամբ այլ կը ջանար ցրուել Հայ ազգաբնակչութիւնը այն վայրերէն, ուր ան հոծ թիւերով կ'ապրէր դարերէ ի վեր ու այս՝ ծրագրուած կերպով: Այսպէս՝ Սելիմ Ա. Սուլթանը, Իտրիս պատմաբան կոչեցեալ քիւրտը առաջին կառավարիչ կը նշանակէր Հայաբնակ արեւելեան նահանգներուն, որուն գլխաւոր ջանքերէն մէկը կ'ըլլար իր ազգութեան պատկանող մեծ թիւով տողովուրդ հարաւէն տեղափոխել դէպի Հայկական վայրերը (2): Թուրք-պարսկական, թուրք-ռուսական պատերազմներ, պարբերական ջարդեր, տնտեսական ճնշումներ եւ անապահովութիւն պատճառ կ'ըլլան որ արեւելեան նահանգներու Հայ ազգաբնակչութեան մէկ մասը գաղթելով Փոքր Ասիոյ Կեդրոնական եւ Արեւմտեան կողմը հաստատուի, իսկ աւելի փոքր համեմատութեամբ գաղթ կատարուի՝ մանաւանդ ԺԼ. դարէն ետք, դէպի Անդրկովկասի Հայերով բնակուած հողամասերը: Մինչ կարգ մը խիտ Հայաբնակ նահանգներու մէջ Հայերը, ԺԷ. դարուն, ազգաբնակչութեան 98 տոկոսը կը կազմէին (3), 1912 թ.ին՝ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան տուեալներուն համաձայն Արեւելեան Հայկական վեց վիլայէթներու մէջ ազգաբնակչութեան 38.9 տոկոսն էին, մինչ թուրքերը՝ 25.4 տոկոսը (4): Կարգ մը շրջաններու մէջ ինչ-

2. Adeney Walter F., *The Greek and Eastern Churches*, New York, 1908, p. 548.

3. Ռ. Գ. Սահակեան, *Թուրք-Ճրանսիական Յարաբերութիւնները եւ Կիլիկիան 1919-1921 թթ.*, Երևան 1970, էջ 49:

4. Marcel Leart, *La Question Arménienne à la lumière des documents*, Paris, 1913, p. 60.

պէս Վանի դաւառին մէջ, հայերը բնակչութեան 80 տոկոսը կը կազմէին:

Օսմանեան կայսրութեան անդամահատումով եւ մանաւանդ Սան Սթեֆանոյի դաշնագրի 16-րդ եւ ապա՝ դայն փոխարինող Պերլինի դաշնագրի 61-րդ յօդուածներէն ետք՝ Օսմանեան Պետութիւնը սկսաւ հայաջինջ քաղաքականութեան մը, ինչ որ Առաջին Համաշխարհային պատերազմին հայոց հանդէպ կիրարկուած ցեղասպանութեան յանդեցաւ, Մեծ Տէրութեանց ճնշումով հայկական վեց նահանգներու վրայ հայոց ունեցած իրաւունքներուն թրջական պետութեան պաշտօնական ճանաչումէն (1914 Յունուարի 26-ի բարենորոգումներու համաձայնագիր) հազիւ տարի մը ետք:

Պերլինի դաշնագրով՝ 1878 թ.ին, Կարսն ու Արտահանը Ռուսիոյ տրուած էր: Իսկ բարենորոգումներու 1914 թ.ի համաձայնագիրը կը նշէր այն վայրերը, ուր օտար ընդհանուր քննիչներ պիտի գային: Ա. մարզին մէջ կը մտնէին Էրզրումի, Տրապիզոնի եւ Սվազի վիլայէթները եւ Բ. մարզին մէջ Վանի, Պիթլիսի, Խարբերդի եւ Տիարպեղիբի վիլայէթները:

#### ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՆՈՐ ՇՐՋԱՆԸ

1915-1916 թթ.ուն, հայոց հանդէպ թուրքերու կիրարկած ցեղասպանութեան իբր հետեւանք, դատարկուեցաւ Արեւմտեան Հայաստանը իր բնիկ տարրէն, ապա՝ Յարական Ռուսիոյ զօրքերը, որոնք հայերէ գրեթէ դատարկուած Արեւմտեան Հայաստանը գրաւած էին, հեռացան՝ Հոկտեմբերեան Յեղափոխութենէն ետք: Կացութիւնը փրկելու հայկական կարգ մը փորձեր (Զօր. Անդրանիկի, Զօր. Թորգոմի եւ այլոց կողմէ) մնացին ապարդիւն: Արիւնաքամ, դարերէ ի վեր պետականութենէ ու կանոնաւոր զօրքէ զուրկ հայ ժողովուրդը՝ մանաւանդ շրջանի հայութիւնը հարուածող Մեծ Եղեռնէն ետք, չէր կրնար 1918 թ.ի սկիզբը Սեւ ծովէն սկսեալ եւ Երզնկայի մօտերէն մինչեւ Մուշի մօտերը եւ Վանայ լիճին հարաւր մօտ 200 մղոն երկարութեամբ ռազմաճակատ մը պահել եւ լեցնել ռուս զինուորներու թողուցած պարապը: 1918 թ.ի Յունուարի կէսերուն թուրքեր խուժեցին Արեւելք եւ Ալբիլին արդէն Պաթում էին, ճամբու ընթացքին գրաւած ըլլալով բոլոր հայկական հողերը:

Հակառակ անոր որ Լենին 1917 թ.ի Դեկտեմբերի 29-ին յայտարարած էր թէ «ժողովրդական գործավարներու խորհուրդը կը յայտարարէ հայ ժողովուրդին, թէ Ռուսիոյ գիւղացիական ու բանուորական կառավարութիւնը պիտի պաշտպանէ հայութեան իրաւունք»

ները Ռուսիոյ կողմէ բռնադրաւուած թրքապատկան Հայաստանի վրայ, ազատ ինքնորոշման իրաւունքով, մինչեւ լիակատար անկախութիւն», զինուորական իրականութեան պարտադրանքով Գերման ճնշումներու տակ կը ստիպուէր ստորագրել Պրեսթ-Լիթովսքի դաշնագիրը 1918 Մարտի 3-ին, որուն չորրորդ յօդուածը կ'ըսէր. «... Ռուսաստանը պիտի անէ իր կարելին, ապահովելու համար շուտափոյթ պարպումը արեւելեան Անատոլիայի նահանգների եւ սրանց կանոնադրեալ վերստին յանձնումը Տաճկաստանին: Արտահանի, Կարսի եւ Պաթումի շրջանները նմանապէս անյապաղ պարպուելու են ռուս զօրքերի կողմից...»:

Սոյն դաշնագիրը Կարսէն, Արտահանէն եւ Պաթումէն Ռուսերու մեկնումէն ետք թուրքերու կողմէ անվերապահօրէն դրաւումը չէր նախատեսեր, այլ կ'որոշէր հանրաքուէ կատարել այդ շրջաններու ինքնորոշման համար:

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետութիւնը, Պաթումի մէջ, 4 Յունիսի 1918-ին ստորագրեց դաշնագիր մը, հակառակ Սարդարապատի յաղթանակին, որով Հայաստանի հողամասը միայն 9,000 քա. զւ. տարածութիւն մը կ'ունենար: Մուտրոսի մէջ կնքուած զինադադարէն ետք, 1918 թ.ի աշնան կացութիւնը յեղաշրջուելով հայկական պետութեան հողամասին ընդարձակման ձեռնարկուեցաւ, օգտուելով Պրեսթ-Լիթովսքի դաշնագրի ջնջումէն: Ղարաքիլիսէն, Ալեքսանդրապոլը, Կարսի եւ Սուրմալուի դաւառները Հայկական պետութեան սահմաններուն մէջ անցան:

Թրքական Միլլի շարժումի օրերուն, երբ դաշնակիցները պարտուած թուրքիան զինաթափ ըրած չէին եւ թուրքեր իրենց ուժերը համախմբելով կը վերակազմակերպուէին եւ ազգային համագումարներ կը կայացնէին, անդին՝ «ծովէ-ծով Հայաստան» ստեղծելու անիրապաշտ քաղաքականութիւն կը հետապնդուէր: Այդ շրջանին նոյնիսկ թուղթի վրայ Սեւրի դաշնագրով (10 Օգոստոսի 1920) Հայոց տրուած 68,500 քա. զւ. հողամասի եւ սկզբունքով հայոց պատկանող արեւելեան Հայաստանի ինչպէս նաեւ Կարսի ու Արտահանի մարզերով երբ Հայաստան անուանապէս կ'ունենար շուրջ 130,000 քա. զւ. տարածութիւն, ոչ միայն հայկական պետութեան գոյութիւնը խնդրոյ առարկայ կ'ըլլար, այլ մանաւանդ հայ ժողովուրդի Ֆիզիքական գոյութիւնը կը վտանգուէր մեծ սպառնալիքով մը՝ թրքական արշաւանքով Հայաստանի վրայ: Հայկական հողամաս նկատուող Օլթիի (5) Հայոց կողմէ անժա-

5. Հայաստանի Հանրապետութեան Անխիմ վարչապետ՝ Ալ. Խաղիսեան իր Հայաստանի Հանրապետութեան Ծագումն ու Զարգացումը գրքին մէջ (Պէշ-

մանակ դրաւումը անհրաժեշտ պատրուակը Հայթայթելով, Բեմալական Թուրքիան պատերազմական գործողութիւններու ձեռնարկեց Հայաստանի դէմ 23 Սեպտեմբերի 1920-ին: Բեազըմ Գարապէջերի գլխաւորած թրքական ուժերը Օլթիի, Սարըղամիչի, Կազզուանի, Սուրմալուի շրջաններու մէջ յարձակողականի անցան ու ոչ միայն Կարս բերդաքաղաքը անհառունակ կերպով ինկաւ, այլ՝ ըստ 6 Նոյեմբերի 1920-ի ղինադուլի պայմաններուն, Թուրքեր Ալեքսանդրապոլ մտան: Ապա Ալեքսանդրապոլի (6) 2 Դեկտեմբերի 1920-ի Հայոց համար նուաստացուցիչ դաշնագրով Թուրքիա տը ֆաքթօ ստացաւ Կարսը, Սարըղամիչը, Օլթին, Արտահանը, Կազզուանը, Ալեքսանդրապոլը եւ Սուրմալուի շրջանները: Կարսի նահանգը եւ Սուրմալուն կը համարուէին վիճելի՝ մինչեւ երեք տարի, երբ Հայոց կառավարութիւնը կարող էր յայտարարել հանրաքուէ, շրջանի վերջնական օրինավիճակը ճշդելու համար, հայ-թրքական խառն ժամտարմըրիի ներկայութեամբ: Անշուշտ հանրաքուէն խաբուսիկ էր, քանի՜ ջարդով, տեղահանութեամբ եւ վախի ու ճնշումի տակ հեռացումով, հողամասերը հայերէ դատարկուած էին ու նոյնիսկ եթէ հայեր վերադառնային, նախկին թիւը կարելի պիտի չըլլար ունենալ:

Նորակազմ Հայկ. Ս. Ս. Հ. կառավարութիւնը 10 Դեկտ.ի 1920ին, չեղեալ համարեց վերոյիշեալ դաշնագիրը: Հակառակ այս

բուք, 1968, էջ 301) կը յայտնէ թէ Ալեքսանդրապոլի հայ-թրքական բանակցութեան շրջանին Գազըմ Գարապէջի իրեն ըսած է թէ «գիմուարական գործողութիւններու սկիզբը ան չէր մտածեր գրաւել Կարսը, այլ, մպատակ ունէր առնել Օլթիի շրջանը: Բայց տեսնելով, թէ ինչ դիրքերամբ հայերը կը զիջէին հողերը իր մնջման տակ ան աւելի եւ աւելի առաջացաւ»: Այսուհանդերձ քիմալականները որոշ ծրագիրներ ունէին ամբողջ Արեւելեան Հայաստանը մուսնելու եւ յարմար առիթի կը սպասէին (տես Ե. Ղ. Սարգսեան, Ռ. Գ. Սահակեան, Հայ ժողովուրդի նոր շրջանի պատմութեան նենդափոխումը Թուրք պատմագրութեան մէջ, Երեւան 1963, էջ 41-55):

6. Ալեքսանդրապոլի դաշնագրի բանակցութիւններում՝ ըստ Ալ. Խատիսեանի (ձոյն, էջ 311), Ամիի, Նախիջեւանի, Սուրմալուի մասին երկար վիճաբանութիւններ կ'ըլլան. սակայն բուրքեր անգիջող կը մնան, բացի Կարսի մահամեզէն Ագրաբայի մէկ մասը Հայաստանի սահմաններում մէջ մտնելը ընդունելէն եւ այլ մանր ու մասնակի փոփոխութիւններէ:

23 Փետրուարի 1921-ին Թուրքիոյ տուած վերջնագրին հիմամբ է որ վերաստան յօտարեցաւ որ բուրքերը գրաւեն Արտահանը, Արդուիքը, եւ Պաքուսը: Սակայն Մոսկուայի պայմանագրով Պաքուս վերաստանի մնաց:

իրողութեան 16 Մարտի 1921ի Մոսկուայի (Փետրուարեան դէպքերու պատճառով իշխանութեան փոփոխութեան շրջան՝ 18 Փետր. - 2 Ապրիլի 1921) եւ 13 Հոկտ.ի 1921 Կարսի դաշնադիրով Հայկական նորոգ բռնադրուեալ հողերը մնացին Թուրքիոյ, բացի Ալեքսանդրապոլէն, զոր Թուրքիա պարտադրուեցաւ յանձնել Հայկական Ս. Ս. Հ. իշխանութեան: Պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով Հայկական Սուրմալուի շրջանը Թուրքիոյ հողամասին մաս կը կազմէր՝ 1920 թ.էն սկսեալ: Թուրք միլլի համաժողովները՝ 1919 թ. Յուլիսէն Սեպտեմբեր էրզրումի եւ Սվազի մէջ գումարուած, նշած էին այն հողամասերը զորս թրքական կը նկատէին՝ Տրապիզոնի, էրզրումի, Սվազի, Տիարպեղիբի, Մամուրիէթ էլ Ազիզի, Վանի եւ Պիթլիսի վիլայէթները (7): Իսկ 1920 Յունուարի 28-ին՝ թուրքերը, Քեմալականներու «Ազգային Ուխտին» մէջ ոչ միայն կրկին շեշտած էին արեւելեան վիլայէթներու թրքական ըլլալու իրենց տեսակէտը, այլ՝ Պաթումի, Կարսի եւ Արտասանի նահանգները կը համարէին Թուրքիոյ վերամիացած (ուր այդ շրջաններու առաջին դրաւումէն ետք արդէն իրենց ի նպաստ հանրաքուէ կատարուած էր) եւ կը յայտնէին թէ անհրաժեշտութեան պարագային նոր ազատ հանրաքուէ կը կատարեն (8):

1918 թ.ին վերոյիշեալ երեք նահանգներու մէջ էնվեր Փաշայի կատարած «հանրաքուէն» խարդախութեամբ ու բռնութեամբ կատարուած էր, ինչ որ Սովետական Ռուսիոյ կառավարութեան 20 Սեպտեմբերի 1918 թուակիր պաշտօնադրին մէջ պարզուած է: Հիմնական կէտը այն էր թէ հակառակ Պրեսթ-Լիթովսքի դաշնադրին, հանրաքուէն թուրք վերահսկողութեան տակ եղած էր, փոխանակ ձգելու որ «մարզերու բնակչութիւնը ինքը տնօրինէր այդ՝ հարեան պետութիւններու եւ Թուրքիոյ համաձայնութեամբ» (9):

Մինչեւ 1914 թ., երբ Կարսի նահանգը մաս կը կազմէր Յարական Ռուսիոյ, անդւոյն բնակչութիւնը կը հաշուէր 404,000 շունչ, որոնց 123,170-ը հայեր էին, 102,860-ը՝ թուրք եւ թաթարներ, 54,931-ը՝ քիւրտեր, 4,226-ը՝ վրացիներ, մնացեալը այլ տարրեր՝ ոռւս, յոյն, եւայլն (10): Հայերը համեմատական մեծամասնութիւն ունէին իւրաքանչիւր տարրի նկատմամբ առանձին-առանձին նկատի առնուած:

7. Ի. Գ. Սահակեան, Թուրք-Ֆրանսիական Յարաբերութիւնները եւ Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան 1970, էջ 43:

8. Նոյն, էջ 53-54:

9. Նոյն, էջ 56:

10. Ալ. Խատիսեան, Յոյն, էջ 155:

Համաձայն 1917 թ. Կովկասի պաշտօնական տարեգրքին, Կարսի նահանգը՝ ըստ իր ստորաբաժանումներուն, ազգաբնակչու-թեան հետեւեալ պատկերը կը ներկայացնէր (11) :

Կարսի շրջան		Օլթիի շրջան	
Հայեր	80,752	Հայեր	4,953
Թուրք-թաթարներ	51,659	Թուրքեր	330
Յիւդական (զնչու.)	23,504	Քիւրտեր	5,179
Քիւրտեր	10,911	Վրացիներ	4,095
Եզդիտիներ	5,123	Եզդիտիներ	21,779
Ռուսեր	1,598	Յոյներ	3,655
Յոյն եւ այլք	4,041	Այլք	206
Արտասահմնի շրջան		Կազգուան	
Հայեր	470	Հայեր	34,721
Թուրք-թաթարներ	15,550	Թուրք-թաթարներ	5,782
Քիւրտեր	8,100	Քիւրտեր	20,677
Եզդիտիներ	4,000	Եզդիտիներ	6,032
Յոյներ	7,850	Ռուսեր, Յոյներ եւ Այլք	15,596
Ռուսեր	1,070		
Այլք	700		

1920 Նոյեմբերի 27-ին՝ Լենինի գլխավորութեամբ կայացած ՌԿ(բ)Պ Կենտկոմի քաղաքապետի նիստին սրողուած էր Անդրկովկասի մէջ «անյասակալ խողազուծիւն ապահովելու անհրաժեշտութեան մասին» : Դեկտ.ի 1ին, սովետ արտաքին գործաւար Չիչերինը հեռագրով կը հարցնէր Երեւանի Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. ներկայացուցիչ Լեզրանին թէ արդե՞ք թրքական կառավարութիւնը ստացած է պայմանագրի այն նախապիծը, որ մշակուած էր իր եւ Պեքիր Սամի պէյին կողմէ (կ'ակնարկէր 24 Օգոստ.ի 1920 թ.ի սովետ-թրքական նախնական պայմանագրին) եւ զրկուած Անքարա՝ Եուսուֆ Բեմալի միջոցով : Եւ թէ արդե՞ք Անքարան ընդունելի կը համարէ զայն (12) :

11. Kévork K. Baghdjian, *Le Problème Arménien*, Université de Montpellier, Faculté de droit et des sciences économiques, thèse, Montpellier, 1969, p. 217.

12. Ռ. Գ. Մահակեան, *Սովետա-թուրքական յարաբերութիւններէ պատմութեան հակադիտական լուսարանումը ժամանակակից թուրք պատմագրութեան մէջ*, Երեւան 1964, էջ 26 :

Սովետ արտաքին գործավար Չիչերին, իր 9 Դեկտեմբերի 1920 թ.ի պաշտօնագրով կ'ողջունէր մօտալուս սովետա-թրքական համաժողովը եւ անհրաժեշտ կը դտնէր Ազրպէյճանի եւ Հայաստանի սովետական կառավարութեանց ներկայացուցիչներու մասնակցութիւնը այդ համաժողովին՝ քանի որ այնտեղ «վճռուելու են տերիտորեալ եւ ուրիշ հարցեր՝ այդ պետութիւնների եւ թուրքիայի ու Ռուսաստանի միջեւ» (13)։ Սակայն թրքական կառավարութիւնը դէմ էր հայկական պատուիրակութեան մասնակցութեան, եւ փաստօրէն չէր ճանչնար սովետական իշխանութեան գոյութիւնը Հայաստանի մէջ։ 18 Փետրուարի 1921-ին, Երեւանի մէջ Միմոն Վրացեան իշխանութեան վերատիրանալով Մոսկուա կը հեռագրէր թէ Խորհրդային Հայաստանի արտաքին գործավարը՝ Ա. Բեզդատեան, Հայաստանի անունով չէր կրնար խօսիլ, որովհետեւ ան Երեւանի նոր իշխանութիւնը չէր ներկայացներ։

Այսպէս՝ առանց հայկական մասնակցութեան, Մոսկուայի մէջ 16 Մարտին կը կնքուէր սովետ եւ թուրք պայմանագիրը, ուր Ալեքսանդրապոլի դաշնագիրը չեղեալ համարուելով հանդերձ, Կարսի նահանգի եւ Սուրմալուի՝ մինչեւ երեք տարի ետք կայանալիք հանրաքուէն, վիճելի հողամասերը ու Արտահանը տը ժլւրէ կ'ըլլային թուրքիոյ, Նախիջևանը Ազրպէյճանի հովանաւորութեան տակ ինքնավար հողամաս կը յայտարարուէր եւ ժ.Ն. յօդուածով՝ Սովետական Ռուսաստանի կառավարութիւնը կը պարտաւորուէր անհրաժեշտ քայլերու ձեռնարկել՝ անդր-կովկասեան հանրապետութիւններուն վերաբերեալ պայմանագրի յօդուածները վերջիններուն կողմէ ճանչցնելու համար։ Սովետական Միութիւնը, որ իրեն համար աննպաստ պայմաններու մէջ էր՝ մէկ կողմէն հակա-սովետական խռովութիւնները (ինչպէս Կրոնշտադի մէջ) միւս կողմէ՝ պարենային եւ քարիւղային տազնապները, կ'ուզէր հողային հարցով թուրքիոյ հետ բախում չունենալ, քանի կը մտածէր թէ այդ միայն անդլեֆրանսական պետութեանց ձեռնտու կ'ըլլար (որոնք այդ օրերուն Լոնտոնի մէջ թուրքերուն հետ ժողովի նստած էին)։ Ուստի կը ջանար սահմանափակել թուրքերու հողային նուաճողական ճրգտումները (օրինակ՝ Ալեքսանդրապոլի դաւառի ազատագրումով), առանց ստիպելու Ալեքսանդրապոլի դաշնագրով թուրքիոյ անցած մարզերու վերադարձուիլ։

Թուրքիան պահանջեց որ անդրկովկասեան հանրապետութեանց հետ հաշտութեան ժողովը գումարուի Անքարայի մէջ սա-

կայն յետոյ համաձայնեցաւ որ Կարսի մէջ դումարուի: Կարսի համաժողովին՝ Հոկտ. 1921, սովետա-թրքական սահմանի վերջնական ճշգրտման հարցին թուրքիա թշնամական վերաբերում ցոյց տուաւ Հայկական ՍՍՀ-ին: Ըստ սովետահայ պատմագիրներու «Կարսի կոնֆերանսում տերիտորիալ հարցերն ըստ էութեան չքննարկուեցին, քանի որ նրանք իրենց արտայայտութիւնն էին դռել Մոսկուայի պայմանագրում, որի համաձայն, ՌՍՖՍՌ Կառավարութիւնը, ստեղծուած իրադարձութիւնից ելնելով, Կարսի մարզը, Արտահանը եւ Արդուինը զիջեց Թուրքիային: Սակայն անդրկովկասեան պատուիրակութիւնը հանդէս եկաւ սովետա-թրքական սահմանը մի փոքր շտկելու առաջարկով» (Կառավարիչ Անի քաղաքը եւ աւերակները փոխանցել սովետներուն Ձ. Մ.) սակայն «թրքական պատուիրակութիւնը հրաժարուեց ընդառաջ դնալ այդ խնդրանքին, թէեւ մինչ այդ Անքարայի կառավարութիւնը տուել էր իր համաձայնութիւնը» (14):

Սովետահայ պատմագիր Ռ. Գ. Սահակեանի համաձայն Քեմալական թուրքիան ուղեց վերակենդանացնել Ալեքսանդրապոլի դաշնագիրը: Այսպէս՝ 1921 թ.ի Փետրուար-Մարտին, Լոնտոնի մէջ կայացած ժողովին, ուր պիտի վերաքննուէր Սեւրի պայմանագիրը, թրքական պատուիրակութիւնը Փետրուարի 24-ին իր յուշագրով է միջի այլոց կը յայտնէր թէ Հայաստանի հետ իր սահմանը ըլլայ ըստ Ալեքսանդրապոլի դաշնագրին, սակայն այդ չէր իրականացած: Իսկ Մոսկուայի 1921 Մարտի 16-ի պայմանագրով՝ Ալեքսանդրապոլի դաշնագիրը չեղեալ համարուելով հանդերձ՝ թուրքիա կ'ուզէր այդ կիրարկել, ինչ որ Ձիչերինի 8 Ապրիլի 1921 թուակիր դիտողագիրին տեղի տուաւ, որ «Ալեքսանդրապոլի պայմանագրի կիրառումը ցանկալը հաւասարագոր է Մոսկուայի պայմանագրի վերացմանը»: Մոսկուայի մէջ համաձայնուած էր որ թրքական պատուիրակութիւնը իր երկիրը վերադառնալու ճամբուն կանդ առնէ թիֆլիսի մէջ եւ անդրկովկասեան երեք հանրապետութիւններուն հետ պայմանագիր կնքէ, սակայն երբ Ապրիլի կէսերուն թրքական պատուիրակութիւնը թիֆլիս եկաւ, թուրքիոյ արտաքին գործոց նախարար Եուսուֆ Բեմալը յայտնած էր թէ բացի Հայաստանէն միւս հանրապետութեանց հետ պայմանագիր կը կնքէ, այն թաքուն յոյսով որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը կարելի կ'ըլլայ կեանքի կոչել: Ի վերջոյ Կարսի դաշնագրի նախօրեակին

14. նայՑ, էջ 37:

15. նայՑ, էջ 33:

Թուրքեր կ'ուզէին անջատ դաշնադրեր կնքել Անդրկովկասեան Հանրապետութեանց հետ այն յոյսով որ կրնան Ալեքսանդրապոլի դաշնադիրը Ս. Հայաստանին պարտադրել: Բայց այդ չիրագործուեցաւ: Քեմալական կառավարութիւնը Կարսի պայմանագրի ստորագրուելէն ետք իսկ Ալեքսանդրապոլի դաշնադիրը՝ Հայաստանի հետ կնքուած հաշտութեան պայմանագիրը կը համարէր՝ այդ մասին որոշ յոյսեր սնուցանելով, ինչ որ կը փաստէ 1923 թ.ի Օգոստոսի 13-ին Թուրքիոյ Ազգային Ժողովին մէջ Աթաթուրքի արտասանած ճառը, ուր ան կ'ըսէ «Մենք ոռուսներ հետ կնքեցինք բարեկամութեան պայմանագիր, որն ուժի մէջ է ցայսօր: Այդ նոյն հիմունքներով պայմանագրեր կնքուեցին Ուկրանայի, Վրաստանի, Ադրբեջանի ու Ավղանիստանի հետ: Արեւելեան ճակատում տարած յաղթանակից յետոյ մենք հաշտութիւն կնքեցինք Հայերի հետ» (16):

Հակառակ անոր որ Սովետական Ռուսիոյ ազգային գործերու Ժողովրդական կոմիսարիայի Մոսկուայի մէջ հրատարակուող օրկանը՝ «ժիզն Նացիոնալիստէյ», Ա. Սկաշկո-ի ստորագրութեամբ՝ 4 Մարտի 1921-ին կը գրէր. «յանուն Արեւելքի յեղափոխութեան դարգացման» աշխատաւոր Ռուսիան եւ Սովետական Հայաստանը «կարող են յայտնի զիջումներ անել Թուրքիային», այսուհանդերձ Թուրքիան պէտք է հայկական սովետական իշխանութեան եւ անոր նախորդող հայկական իշխանութեան մէջ տարբերութիւն մը դնէր եւ թէ «անմտութիւն էր Սովետական Հայաստանի նկատմամբ ցուցաբերել թշնամական վերաբերմունք»: Թուրք ազգայնամոլները, որոնցմէ շատեր նախկին Իթթիհատականներ էին, ոչ միայն շարունակեցին իրենց թշնամական վերաբերմունքը, այլ եղան բացարձակապէս անզիջող, նոյնիսկ երբ Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչ Գանեցկինը՝ Կարսի դաշնագրին, յանուն Հայաստանի, Անիի աւերակները կամ Կողբի աղահանքը կը պահանջէր ձգել Ս. Հայաստանի: Մէկ կողմէ քաղաքական-զինուորական ծանր իրադրութիւնը եւ Մոսկուայի դաշնագրով ստեղծուած կացութիւնը, միւս կողմէ՝ Թուրքիոյ հետ վէճերու լուծումով «Արեւելքում յեղափոխութեան համար կը բացուի աշխարհը ճնշող Իմպերիալիզմի դէմ անդադար յաղթանակների փայլուն դարաշրջան»՝ Սովետ Ռուսիոյ ղեկավարութեան թիւր կարծիքը, պատճառ եղան որ 1914 թ.ի Ռուս-Թրքական սահմանը չեղեալ համարուելով նորը սահմանագծուի՝ նուիրագործելով Կարսի, Արտահանի եւ Սուրմալուի (20,700 քա. ջրմ.) կորուստը: Պէտք է յիշել որ Սուրմալուն, որ

Քեմալական ազգային ուխտով պծուած Թուրքիոյ սահմաններուն մէջ չէր իսկ մտներ եւ մինչեւ 1920 թ.ի հայ-թրքական պատերազմը Թուրքիոյ երկարատեւ զերիշխանութեան տակ երբեք չէր եղած, կ'անցնէր Թուրքիոյ:

Քեմալական Թուրքիան հակառակ իր ծայրայեղ ու մոլեռանդ ազգայնականութեան կրցած էր վարպետ դիւանագիտութիւն բանեցնել եւ երկդիմի քաղաքականութեամբ սիրաշահել նորաստեղծ Սովետական Ռուսիոյ զործօն համակրանքը իր «հակա-իմբերիալիստական» արտայայտութիւններով եւ իր զաւթիչ քաղաքականութեան՝ հակա-սուլթանական ազգային-ազատագրական ու անկախութեան պայքարի բնոյթը տալով, մինչ միւս կողմէ՝ Տրանսայի, Անգլիոյ եւ Իտալիոյ հետ այլազան հիմունքներով ոչ միայն հասկացողութեան կու գար, այլ՝ կ'ապահովէր անոնց դրամական նեցուկը, մինչեւ որ կը յաջողէր Կարսի դաշնագրով (1921 թ.) լուծել Արեւելեան ճակատի իր հարցերը, Կեդրոնական ճակատի վրայ Տրանքլին - Պուլոնի հետ կայացած համաձայնութեամբ՝ Կիլիկիոյ հարցը, եւ Լոզանի դաշնագրով (1923 թ.) հողային եւ այլ հարցերը՝ ի նպաստ Թուրքիոյ: Թուրքիոյ հետագայ ճարպիկ քաղաքականութիւնը՝ ապահովելու համար Ալեքսանդրապոլի Սանճազը (1938 թ.) եւ լարախաղաց կեղծաւոր ու երկդիմի քաղաքականութիւնը համաշխարհային Բ. Պատերազմին, գրեթէ մինչեւ վերջին շրջանին Քեմալական հին ազգայնական քաղաքականութեան շարունակութիւնն ու բերեղացումն էր:

Հակառակ անոր որ ՍՍՀՄ - Թուրքիա ոչ-յարձակման եւ չէ-զոքութեան պայմանագիր մը կնքուած էր Փարիզի մէջ, 1925 Դեկտեմբերի 17-ին, եւ յետոյ՝ քանի մը անգամ վերանորոգուած, Թուրքիա՝ միշտ հետամուտ իր շահերուն, ՍՍՀՄ-ի դէմ ուղղուած խմբաւորումներու մէջ մտաւ, ինչպէս՝ Պալքանեան Անդանդին (1934 թ.), եւ Սաստապատի ուխտին (1937 թ.), միւս կողմէ՝ արեւմուտեան տէրութեանց ալ բարեկամութիւնը փնտոեց, Անգլիոյ հետ (6 Յունիսի 1926-ի բարեկամական դաշնագրով), Իտալիոյ հետ (Մայիս 1928-ի դաշնագրով), Տրանսայի հետ (Փետրուար 1930-ի դաշնագրով) եւ ի վերջոյ՝ պատերազմի սկզբնաւորութեան՝ 19 Հոկտեմբերի 1939-ին, անգլեւֆրանսա-թուրք դաշինքը կնքուեցաւ, Ալեքսանտրէթի սանճաքին Թուրքիոյ կցումէն ետք:

ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՒ ԹՈՒՐԳԻԱՆ  
ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

«Հակա-իմբերիալիստական» եւ «արդիական» Թուրքիան իր

իսկական ընդթը տակաւ առ տակաւ յստակացուց, եւ համաշխարհային Բ. պատերազմին նախորդող օրերուն անգլիաֆրանսական իր «սիրարանութիւններէն» ետք ըուն ճշմամային շրջանին «չէզոքութեան» պիտակին տակ երկդիմի եւ վտանգաւոր քաղաքականութիւն մը վարեց մանաւանդ Նացի Գերմանիոյ լրտեսական դործունէութեան լայն դաշտ տալով եւ թոյլատրելով գերման ռազմանաւերու անցքը դէպի Սեւ ծով:

1940 թ.ին Մոլոթով՝ ի պատասխան Գերմանիոյ արտաքին դործոց նախարար Վոն Ռիպենթրոբի Մոսկուա կատարած կրկնակայացելութիւններուն, Պերլին երթալով խօսակցութիւններ ունեցաւ գերման ղեկավարներուն հետ: Սովետական Տեղեկատուութեան գրասենեակին կողմէ՝ յետ պատերազմեան շրջանին լոյս տեսած հրատարակութեան մը մէջ պարզուած են սոյն խօսակցութիւններու ընթացքին Հիթլերի միտքերը: Նացի բռնապետը կը նկատէր թէ ՍՍՀՄ-ը «Պէտք է սեփականացնէ ելք մը՝ պարսից ծոցին մէջ, գրաւելով արեւմտեան Պարսկաստանը եւ այս երկրին մէջ անգլիացիներու քարկղի շահարկումները: Յետոյ ան կ'ըսէր թէ Գերմանիան կրնար օգնել ՍՍՌՄ-ին, կարգադրելու համար Թուրքիոյ հանդէպ սովետական յաւակնութիւններու հարցը, մէջը ըլլալով նաեւ նեղուցներուն շուրջ Մոնրոյի համաձայնագրին սրբագրումը: Առանց երբեք նկատի ունենալու Պարսկաստանի շահերը, (Հիթլեր) խնամքով կը պաշտպանէր Թուրքիոյ շահերը, (Հիթլեր) խնամքով կը պաշտպանէր Թուրքիան նկատելով բացայայտօրէն իր ներկայ դաշնակիցը, կամ՝ ամէն պարագայի ապագայ դաշնակիցը» (17): Հուսկ՝ սովետական կառավարութիւնը կ'իզուրակացնէ թէ Թուրքիա «սերտօրէն կապուած է Հիտլերական Գերմանիոյ, կամ մտադրութիւն ունի անոր կապուելու»:

1941 թ.ի Յունիսի 22-ին Սովետական Միութեան վրայ գերման ներխուժումէն առաջ՝ 18 Յունիսի 1941-ին, Թուրք եւ գերման բարեկամութեան եւ ոչ-նախայարձակումի դաշնագիրը կնքուեցաւ: Այդ շրջանին երբ ՍՍՀՄ գերման նախայարձակման ենթարկուելով իր պատմութեան ամենէն օրհասական շրջանը կ'անցընէր, Թուրք մամուլը հակա-սովետական արտայայտութիւններով կ'ողողուէր 1941-1942 թթ., եւ Թուրանական զսպուած զգացումները՝ հրապարակային իրենց լայն արտայայտութիւնները կը գտնէին: Զօր. Զաքմաք եւ այլ զինուորական ղեկավարներ եւս մասնակից էին այդ ազգայնամոլ ձգտումներուն: Նացի Գերմանիոյ հակա-հայ տրամադրութիւնները ծանօթ էին, ուստի՝ բնաւ զարմանալի չէր որ Գերմանիոյ

17. Սովետական Տեղեկատուութեան Գրասենեակ, Պատմութեան Զեղծարարները, հրատարակութիւն «Թրուտ» բերքի, Պէյրութ, 1948, էջ 69:

Անքարայի դեսպանը՝ ըստ անգլիական «Գոլիբրդ» շաբաթաթերթի յօդուածագիր Ֆրենք Ճըրվիսի արժանահաւատ տեղեկագրերէն իր ունեցած լուրին, «Ֆրանց Փոն ֆափէն Թուրքիոյ խոստացած է Հայաստանն ու Ազրպէյճանի սահմանամերձ շրջանները՝ եթէ Թուրքիա չէզոք եւ ոչ-պատերազմիկ մնայ» (18) :

Անշուշտ այս մէկը կախեալ էր Գերմանիոյ ՍՍՀՄ-ի դէմ մըղած նախադրածակումէն : 1942 թ.ի աշնան Թրքական զօրքերու կեդրոնացում տեղի ունեցաւ սովետ-թրքական անդրկովկասեան ամբողջ սահմանին վրայ, ակնկալելով որ Ստալինկրատի մէջ սովետներ կը պարտուին (19) : Բայց այդ ակնկալութիւնը չիրականացաւ եւ 1943 թ.ի Փետրուարին գերմանները պարտուեցան Ստալինկրատի մէջ :

Ենորհիւ Չըրչիլի վարած դիւանագիտութեան, Թեհրանի ժողովը (1943 թ. Նոյեմբերի 28 - Դեկտեմբերի 1) քանի մը անգամ դրաղեցաւ Թուրքիոյ հարցով : Չըրչիլ հոն յայտնեց թէ որպէս կարենոր հարց պէտք է «Թուրքիային համոզենք մտնելու պատերազմի մէջ» (20) : Մինչ Ստալին կը յայտնէր թէ «Կասկածում եմ, որ Թուրքիան մտնի պատերազմի մէջ : Նա պատերազմի մէջ չի մտնի ինչպիսի ճնշում էլ գործադրենք նրա վրայ» (21) : Սակայն համաձայն կը գտնուի փորձելու որ ստիպեն Թուրքիան պատերազմի մասնակից ընելու դաշնակիցներու կողքին, սակայն հարկաւոր կը գտնէր որ «Թուրքիան այլեւ խաղ չխաղայ մեր ու Գերմանիայի միջեւ» (22) : Ապա Չըրչիլ 29 Նոյեմբերի նիստին կը յայտնէր թէ «Բրիտանական կառավարութեան անունով ես կարող եմ ասել, որ նա պատրաստ է Թուրքիային նախզուշտացնելու այն մասին, որ եթէ Թուրքիան չի ընդունի պատերազմի մէջ մտնելու առաջարկութիւնը, ապա դա կարող է քաղաքական լուրջ հետեւանքներ ունենալ Թուրքիայի համար եւ կ'ազդէ Վոսիտրի եւ Տարտանելի նկատմամբ նրա ունեցած իրաւունքների վրայ» (23) : Անշուշտ ոեւէ խօսք չեղաւ Հայկական Հողային Հարցի մասին, իբր Թուրքիոյ վրայ գործածուելիք «ճնշման միջոց» :

Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (ՄԱԿ) կանխապատ-

18. «Զարբ-օֆ» օրաթերթ, Պէյրութ, 2 Դեկտեմբեր 1967, էջ 3 :

19. Hostler, Charles, *Turkism and the Soviets*, 1957, p. 176.

20. Թեհրան, Եւրթա, Պոտոզամ, փաստաթղթերի ժողովածու, Հայաստանի հրատարակչութիւն, Երեւան 1970, էջ 12 :

21. Նոյն, էջ 15 :

22. Նոյն, էջ 17 :

23. Նոյն, էջ 37 :

րատական աշխատանքները կը կատարուէին եւ կը ըննուէին անդամակցութեան հարցերը: ՄԱԿ-ի կազմութեան նախապատրաստական այդ խորհրդակցութիւններուն Տամպլըթըն Օքսի մէջ ՍՍՀՄ պաշտօնապէս առաջարկած էր որ իր այն ատեն բաղկացուցիչ 16 հանրապետութիւնները (ներառեալ Ս. Հայաստանը) ՄԱԿ-ի հիմնադիր անդամ դառնան, իբր Գերմանիոյ դէմ գործօն պատերազմիկ երկիրներ: Արեւմտեաններէն դիւաւորաբար Անգլիա եւ ԱՄՆ, դէմ արտայայտուեցան սովետ այս առաջարկին (24) եւ Եալթայի 1945 Փետրուարի 7-ի նիստին՝ ՍՍՀՄ «այդ հարցը դրեց ոչ այն ձեւով, ինչպէս արուել է Տամպլըթըն Օքսում», բայց առաջարկեց, որ երեք կամ, գոնէ, երկու սովետական հանրապետութիւններ դառնան միջազգային կազմակերպութեան նախաձեռնողներ թւում (խօսքը վերաբերում էր Ուկրայինային, Պելոուսիային եւ Լիտվային)» (25): Ի վերջոյ կ'որոշուէր ՄԱԿ-ի սկզբնական անդամ դարձնել բացի ՍՍՀՄ-էն, Ուքրանական ՍՍՀ-ն եւ Պելոուսական ՍՍՀ-ն, դուրս ձգելով Ռուսական դաշնակցային ՍՍՀ-ն, Հայկական ՍՍՀ-ն եւ մնացեալ հանրապետութիւնները (26): Օրինական կամ իրաւական գետնի վրայ մեծ սխալ մըն էր այս՝ քանի ընդունուած երկու հանրապետութիւնները բաղկացուցիչ մասը կը կազմէին ՍՍՀՄ-ի, որ իր կարգին անդամ կ'ըլլար ՄԱԿ-ի: Ճիշդ ձեւը պիտի ըլլար կամ ընդունիլ 16 հանրապետութիւնները, ու Ապահովութեան Խորհուրդի մէջ վեթոյի իրաւունքը վերապահելով Ռուսիոյ, եւ կամ՝ միայն ՍՍՀՄ-ը ընդունիլ: Հայկական շահերէն մեկնելով, անշուշտ որ առաջին ձեւը նպաստաւոր պիտի ըլլար:

Չըրչիլ ամէն ջանք թափեց թուրքիոյ անդամակցութեան համար հակառակ որ ոչ պատերազմիկ էր եւ ոչ ալ պատերազմ յայտարարած Գերմանիոյ դէմ: Անգլիոյ վարչապետը Եալթայի մէջ 8 Փետրուարին կ'ըսէր՝ ինքը «արտայայտուելու է թուրքիային հրաւիրելու օգտին, թէպէտ, գուցէ, այդ առաջարկութիւնը չի հանդիպի ընդհանուր հաւանութեան: Թուրքիան Անգլիոյ հետ դաշինք էր կնքել դեռեւս նախքան պատերազմը շատ վտանգաւոր ժամանակ: Երբ պատերազմն սկսուեց, թուրքերը, դառնում էին, որ իրենց բանակը այնքան լաւ սպառազինուած չէ ժամանակակից պատերազմի համար: Այնուամենայնիւ թուրքիոյ դիրքը բարեկամական եւ օգտակար է եղել շատ տեսակէտներից: Թուրքերը նոյնիսկ անգլիա-

24. Harcave, Sydney, Russia a history, Chicago, 1956, p. 627.

25. Թեհրան, Եալթա, Պոստգամ, էջ 126:

26. Նայմ, էջ 166-167 եւ 180:

ցիներին օգնութիւն էին առաջարկում, թէպէտ անդլիացիները չօգտուեցին այդ առաջարկութիւնից»: «Ջրըչիլը հարցնում է՝ «հարկ չկա՞յ արդեօք թուրքերին հնարաւորութիւն տալ՝ զղջալու մահուան սահճում» (27):

Ստալին կը պատասխանէ որ եթէ թուրքերն մինչեւ ֆետրուարի վերջը պատերազմ յայտարարէ կարելի է դայն ՄԱԿ-ի անդամ հրաւիրել: Այս առաջարկը Ռուզվելթ եւ Ջրըչիլ կ'ընդունին:

Իսկ Հայկական ՍՍՀ-էն ու Սովետ այլ հանրապետութիւններէ 300,000 հայ մարտիկներ կը մասնակցէին սովետ բանակներուն եւ 1941 թ-ի Դեկտեմբերէն ետք կազմուող «ազգային բանակ»ին: Ծուրջ 70 հայ զօրավար, ծովակալ, մարաշախտներ կային: 106 հոգի «Մ. Միութեան Հերոսի» բարձրագոյն կոչման արժանացան, 89-ը թամանեան զօրաբաժինը մեծ համբաւի տիրացաւ: Սփիւռքահայութիւնն ալ «Սասունցի Դաւիթ» հրասայլային շարասիւնին համար հանգանակութիւն կատարեց: Ծուրջ 60,000 հայ զինուորներ զոհուեցան նացի Գերմանիոյ դէմ պայքարի առաջին գծերուն վրայ: Հուսկ՝ Հայկական ՍՍՀ ազգաբնակչութիւնը նուազեցաւ:

Թուրքիա կը վախնար որ Սովետ Միութիւնը իրեն «կուլ տար»: Թուրք պատմաբաններէն Թահսին Եունալ կը գրէ. «Ռուսաստանի այդ քաղաքական նպատակն իմանալով եւ մեր բարեկամներ՝ Անգլիոյ ու Ամերիկայի յիշեցումէն յետոյ, մենք 1945 թ-ին Գերմանիոյ ու Ճաբոնի դէմ պատերազմ յայտարարեցինք եւ բնական ձեւով պատերազմի մէջ մտանք» (28): Այսպէս Թուրքիա իրաւունք կ'ունենար ՄԱԿ-ի անդամ ըլլալու եւ օգտուելու Արեւմտեաններու նեցուկէն:

ԿԱՐՍ ԵՒ ԱՐՏԱՀԱՆԻ ՀԱՐՑԸ 1945-1970 ԹԹ.

Կարճ շրջան մը ետ դառնալով յիշեցնենք որ 1925 Դեկտեմբերի 17-ին՝ Փարիզի մէջ, կնքուած էր ՍՍՀՄ-Թուրքիա ոչ-յարձակման եւ չէզոքութեան պայմանագիրը, իսկ 1929 Դեկտեմբերի 17-ին Անքարայի մէջ ստորագրուած սովետա-թրքական արձանագրութիւն մը, որուն բ. յօդուածը պայմանաւորուող կողմերուն կը պարտաւորէր իրար տեղեակ պահել այլ պետութիւններու հետ քաղաքական պայմանագրեր կնքելու մասին եւ առանց միւս կողմի համա-

27. Նոյն, էջ 137:

28. Tahsin Unal, 1700 den 1958e Kadar Turk Siyasi Tarih, Ankara, 1958, p. 291.

ձայնութեան այդպիսիք չստորագրել (29)։ Սակայն Թուրքիա ոչ միայն նացի Գերմանիոյ հետ իր կնքած 1941 Յունիսի 18-ի դաշնադրով խախտած էր Սովետներու հետ իր ստորագրած պայմանադրութիւնը, այլ կը ծրագրէր նացի Գերմանիոյ Սովետ Միութեան վրայ արշաւանքի յաջողութենէն ետք ՍՍՀՄ-ի վրայ յարձակիլ «Երանական սարահարթի վրայով՝ Բաքուի ուղղութեամբ»։ Ինչպէս յետ-պատերազմեան շրջանին Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան գաղտնի փաստաթուղթերէն քաղելով «Փրաւտա» իր 1947 Մարտի 27-ի թիւով կը գրէր թէ ՍՍՀՄ-ի վրայ Թուրքիոյ յարձակումը նշանակուած էր 1942-ի Նոյեմբերին, երբ Պերլին յայտարարէր Ստալինի հրահրած անկումը (30)։ Միւս կողմէ պատերազմի ընթացքին Մոնթրոյի նեղուցներու վերաբերեալ համաձայնագիրը եւս ի նպաստ նացի Գերմանիոյ խախտած էին Թուրքերը։ Այս բոլորին դէմ յանդիման եւ համաձայն պատերազմի վերջին շրջանի սովետ ընդհանուր քաղաքականութեան ծրագիրներուն սովետ եւ Թուրք բարեկամութեան դաշնագիրը ՍՍՀՄ-ի կողմէ չեղեալ համարուեցաւ 19 Մարտի 1945-ին։ Իսկ Փոցտամի համաժողովէն քանի մը շաբաթ առաջ Անքարայի մօտ Սովետ Միութեան դեսպանը՝ Վինոկրատով 22 Յունիսի 1945-ին թրքական կառավարութեան յայտնեց թէ ՍՍՀՄ-ն պատրաստ էր նոր բարեկամութեան դաշնագիր մը կնքելու Թուրքիոյ հետ՝ եթէ նեղուցներու վերհսկողութեան վերաբերեալ Մոնթրոյի համաձայնագիրը, ըստ որոշ պահանջներու, վերատեսութեան ենթարկուէր եւ եթէ Կարս, Արդուին եւ Արտահան ՍՍՀՄ-ի վերադարձուէին քանի անոնք կը պատկանէին Հայաստանի եւ Վրաստանի (31)։

Երեւանի մէջ լոյս տեսած Փոցտամի համաժողովին (Յունիսի 17 - Օգոստոսի 2) ատենադրութեան փաստաթուղթերու ժողովածուին մէջ հայեւլարացական հողային պահանջներու մասին թէեւ արձանագրութիւններ չկան, սակայն բազմիցս խօսուած է նեղուցներու խնդրին մասին եւ ժողովի եզրակացութեան ժՁ. դրուելը կը վերաբերի «Սեւ ծովեան նեղուցներու» հարցին (32), ուր հարցը ՍՍՀՄ-ի, Ամերիկայի եւ Անգլիոյ իւրաքանչիւրին կառավարութեան եւ թրքական կառավարութեան բանակցութիւններու նիւթ ըլլալը

29. Ռ. Գ. Սահակեան, Սովետա-Թուրքական Յարաբերութիւնները, Խլմ., էջ 89։

30. Նոյն, էջ 96։

31. Keessing's Contemporary Archives (1946-1948), p. 7737 a.

32. Թեհրան, Եւլթա, Պոստդամ, էջ 442-443։

կը համաձայնին: Սակայն Ամերիկայի նախկին նախագահ Թրումըն իր յուշերուն մէջ կը գրէ թէ ՍՍՀՄ-ի արտաքին գործավար Մոլոթով «Թուրքիոյ արեւելեան սահմաններու փոփոխութեան» ակնարկելէ ետք «աւելցուց, թէ 1921 թ.ին ուսական հողեր առնուած էին Սովետ. Հայաստանէն եւ Սովետական Վրաստանէն, եւ ինք պնդած էր, թէ այս խնդիրը պէտք էր կարգադրուէր նախ (սովետեւթուրք) զինակցութիւն կնքելէ առաջ»: Թրումըն կը շարունակէ. «Ստալին աւելցուց, թէ Թուրքերու վախը կը ծնի ճշդումէն այն սահմաններուն, որոնք պոլսթիւն ունէին ցարական կառավարութեան օրերուն: Ստալին յայտարարեց, թէ ինք նկատի ունէր Կարսը, որ նախապէս Հայաստանի մաս կը կազմէր, եւ Արտահանը, որ նախապէս Վրաստանի ենթակայ էր: Ստալին աւելցուց թէ ... այժմու սահմանները ճիշդ չէին» (33):

Այդ օրերուն Սովետական Հայաստանի Կոմկուսի Ա. Քարտուզար Գրիգոր Արութիւնով (Յարութիւնեան) Երեւանի մէջ իր խօսած մէկ ճառին մէջ ի միջի այլոց կ'ըսէր. «Թուրքիայի կողմից հայկական հողերի վերադարձը նրանց իսկական տիրոջ՝ Ս. Հայաստանի, արդարացի է... Թուրքիայի կողմից բռնի կերպով զաւթուած այդ (Կարս, Արտահան եւ շրջանները - Ձ. Մ.) եւ միւս հայկական մարզերը վերադարձնելու վերաբերեալ հարցի պահանջը արդարացի պահանջ է»: Միաժամանակ ան կ'արտայայտուէր ներգաղթի մասին:

Թիֆլիսի «Կոմունիստի» թերթին մէջ վրացի ակադեմականներ Փրոֆ. Զանաշիա եւ Փրոֆ. Պերժենիշվիլի, Արտահանի, Արդուիւնի եւ այլ Սեւ ծովեան շրջաններու վրացական ՍՍՀ-ի կցման պահանջը պատմական ու այլ գետիներու վրայ ըլլալը կ'առաջադրէին 14 Դեկտեմբերի 1945-ին իրենց դրութեամբ (34): Պէտք չէ մոռնալ որ այդ նահանգներու մէջ իրենց ցեղակից բայց ոչ-գաւառակից վրացիներ կ'ապրէին: Սոյն դրութիւնը լայն արձագանգ կը գտնէր 20 Դեկտեմբերի Մոսկուայի ժողովէն առաջ: Թրքական կառավարութիւնը կը հերքէր վրացի ակադեմականներու տեսակէտը:

Սփիւռքահայութիւնն ալ քաջալերուած հայկական դատի լուծման նպաստաւոր այս առիթէն ոչ միայն կը քաջալերէր զանգուածային ներգաղթի շարժումը դէպի մայր հայրենիք այլ կը լծուէր քաղաքական դիմումներու եւ քարոզչական աշխատանքներու գործին: Ամերիկահայ Ազգային Պորհուրդը Լոնտոնի մէջ գու-

33. Truman, Harry S., Memoires by Harry S. Truman, Year of Decision, vol. I, New York, 1955, pp. 375-76.

34. Keesing's Contemporary Archives (1946-1948), op. cit.

մարուող արտաքին գործոց նախարարներու ժողովին՝ 16 Սեպտեմբերի 1945 թ.ին կը հեռագրէր, պահանջելով «Թուրքիոյ մէջ հայկական նահանգներու միացումը Սովետ Հայաստանի ազատ եւ ապահով հանրապետութեան» (35)։ Սիմոն Վրացեանի ստորագրութեամբ, ՄԱԿ-ի Սան-Ֆրանսիսկոյի ժողովին՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը նոյնանման պահանջք մը կ'ընէր, նոյնը կ'ընէր Սուրբիոյ եւ Լիբանանի Հայ Ազգային Խորհուրդը 17 Յունուարի 1946-ին ՄԱԿ-ի ընդհ. ժողովի նախագահին հեռագրելով (36)։ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ա.ի կողմէ եւս 27 Նոյեմբերի 1945-ին ղիմում եղաւ Չորս Մեծերուն, որոնք այդ օրերուն Մոսկուայի մէջ արտաքին գործավարներու ժողով կը գումարէին։

Հատ ամերիկացի սիւնակադիր Գոսթանթին Պրատնի, որ իր տեղեկութիւնները քաղած է Ուաշինկթընի Ամերիկեան արտաքին նախարարութեան շրջանակներէն, Լոնտոնի արտաքին գործոց նախարարներու խորհրդաժողովին «Մոլոթով շատ որոշ կերպով հասկըցուցած է թէ՛ նեղուցներու հակալիւրը միջազգային պէտք չէ ըլլայ, այլ պէտք է յանձնուի միայն Ս. Միութեան եւ Թուրքիոյ, ինչպէս եւ Կարսն ու Արտահանը անպայման պէտք է կցուին Ս. Միութեան»։ Յօդուածազիրը իր կողմէ կ'աւելցնէ թէ «Ամերիկայի արտաքին գործոց քարտուղար՝ Պըրնզ, մտահոգուած է այժմ նեղուցներու եւ Կարսի ու Արտահանի խնդիրներով, որովհետեւ այդ վերջին խնդիրներու լուծումը կրնայ պոռթկում բերել» (37)։ Արդարեւ նոյն շրջանին Թուրք եւ սովետ սահմանադրուի վրայ Սովետական զօրքերու մեծ կեդրոնացումներ կ'ըլլային եւ դէպի Թուրքիա արշաւանքի մը կարելիութիւնները մեծ էին։

1945 թ.ի Դեկտեմբերի վերջերուն Մոսկուայի մէջ երեք Մեծ Տէրութեանց արտաքին գործոց նախարարներու ժողովի նախօրեակին հայկականէ հտք վերոյիշեալ վրացական պահանջները խորպէս կը մտահոգէին Թուրքերը, որոնք արեւելեան նահանգներու եւ Տրապիզոնի մէջ ցոյցեր կը կատարէին։ 26 Դեկտեմբերին, Տրապիզոնի մէջ հրատարակուող «Հալք» թերթը կը գրէր. «Մինչեւ որ արեան վերջին կաթիլը ցամքի մեր երակներէն եւ մեր սիրտերը դադրին բարախելէ, պիտի կռուինք՝ պահելու համար մեր հողային ամբողջութիւնը» (38)։

35. «Զարբ-օմֆ» օրաքերք, Պէյրուք, 16 Սեպտեմբեր 1960, էջ 3։

36. Keesing's Contemporary Archives (1946-48), p. 7738.

37. «Զարբ-օմֆ» օրաքերք, Պէյրուք, 5 Դեկտեմբեր 1967, էջ 3։

38. Նոյն, 26 Դեկտեմբեր 1967, էջ 3։

Թուրք մամուլը միահամուռ կերպով թիկունք կը կանգնէր թրքական կառավարութեան հողային հարցին նկատմամբ բռնած դիրքին: Հիւսէյն Ջահիտ Եալչըն «Թանին»-ի մէջ (21 Յունիսի 1945), Եոնուս Նատի «Ճումհուրիյէթ»-ի մէջ (21 Յուլիսի 1945) իրենց գրութիւններով, իրենց հակահայ զղացումները լիովին պարզած էին:

Թուրքիոյ նախագահ Ինէօնիւ, 1 Նոյեմբերի 1945-ին, Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովին մէջ կը յայտարարէր. «Թրքական հողամասին ոչ մէկ մասը կրնայ պահանջուիլ որեւէ մէկէն...» Ապա կը մերժէր հողային հարցի մասին ՍՍՀՄ-ի հետ խօսակցիլ: Իսկ վարչապետ Սարաճօղլու, 6 Յունուարի 1946-ին կը յայտնէր. «Ոչ իսկ մէկ հայ կ'ապրէր Կարս եւ Արտահանի շրջաններուն մէջ» մոռնալով 1920 թ.ին հոն Թուրքիոյ կատարած զուլումները, որոնց պատճառով պարպուած էր շրջանը հայութենէն (39):

Անգլիոյ արտաքին գործոց նախարար Էրնեսթ Պելին, Փետրուար 1946-ին, Անգլիոյ Հասարակաց Տան մէջ, ի միջի այլոց, Կարս եւ Արտահանի ՍՍՀՄ-ի պահանջքին մասին ըսած է. «Թուրքական սահմանը պարտադրուած չէ, այլ՝ արդիւնքն է բանակցութեանց» եւ թէ ազգաբնակչութեանց տեղափոխութիւն եղած է (40): Հայոց Ազգային Խորհուրդը Տոքթ. Ա. Ալիշանեանի ստորագրութեամբ այս առթիւ իրեն յիշեցուցած է պատմական իրողութիւնները, խնդրելով որ Անգլիան ոչ միայն Կարս եւ Արտահանի վերաբերեալ հայոց իրաւունքը պաշտպանէր, այլ Թուրքիոյ իշխանութեան տակ եղող այլ հայկական դաւառներու նկատմամբ ալ պաշտպան հանդիսանար:

21 Փետրուարի 1946-ին Լոնտոնի մէջ զումարուող ՄԱԿ-ի Ժողովին, ՄԱԿ-ի Ամերիկեան պատուիրակութեան անդամներուն ուղղած հեռադրով, Հայկական Իրաւանց Պաշտպանութեան Ամերիկեան Նորակազմ Յանձնախումբը, որ արուեստներու, մշակոյթի, կրօնական եւ քաղաքական մարզերէ 85 ականաւոր գործիչներէ բաղկացած էր, իր քարտուղար Վեր. Ռապըրթ Սըրլի ստորագրութեամբ ծանուցած էր «իբ պաշտպանութիւնը աւելի քան 1 միլիոն հայ տարագիրներու եւ անոնց զաւակներու բաղձանքներուն իրագործման, որոնք ի սիլուս աշխարհի, կը պահանջեն իրենց հայրենիքի ընդարձակումը, որպէսզի հոն կարենան հաստատուիլ»: Ապա՝ կը պահանջէր որ Ուելսընի Հայկական սահմաններու մասին տուած վճիռը «նպաստաւոր նկատուման արժանանար» (41):

39. Keesing's Contemporary Archives (1946-48) p. 7738.

40. New York Times, February 22, 1946.

41. «Զարթո՞ւմ» օրաթերթ, Պէյրուս, 21 Փետրուար 1970, էջ 3:

Այս մարմինը 28 Ապրիլի 1946-ին, Նիւ Եորքի Քարնիկի Հո-  
լին մէջ մեծ հաւաքոյթ մը կազմակերպած էր պահանջելով՝ «ար-  
դարութիւն հայոց համար»: Հոն՝ ծերակուտականներ, ներկայա-  
ցուցչական տան անդամներ եւ ակնաւոր անձեր խօսք առած էին  
թիկունք կանգնելով հայոց արդարացի պահանջներուն:

1947 Ապրիլի 30 - Մայիսի 6-ը Նիւ Եորքի մէջ կը դումար-  
ուէր համաշխարհային Հայկական Քոնկրէսը (715 պատգամաւոր-  
ներ 22 տարբեր երկիրներէ) որուն Հ. Յ. Դաշնակցութենէն դուրս  
գրեթէ բոլոր կազմակերպութիւնները կը մասնակցէին: Սոյն Քոն-  
կրէսը ՄԱԿ-ին կը դիմէր խնդրելով «հայոց հողային պահանջնե-  
րը դնել Միացեալ Ազգերու օրակարգին վրայ եւ արդար ու հաս-  
տատակամ լծուելով մը՝ ազատագրել տակաւին թրջական լուծին  
տակ դտնուող Ուիլսոնի սահմանագծած հայապատկան երկրամասը,  
եւ վերադարձնել զայն իր օրինաւոր տիրոջ՝ Հայկական Հանրապե-  
տութեան» (42):

Դժուար թէ ՄԱԿ-ը իր սահմանադրութեան բնոյթով կարենար  
քննել նման դիմում մը: Միջազգային քաղաքական պայմանները  
ձեռնտու չէին, եւ դատը ներկայացնող պետութիւն մը չկար:

Համաժողովէն առաջ՝ 1947 թ.ի Ապրիլին, ԱՄՆ-ի նախագահ  
Հերի Թրումըն կը հրապարակէր իր անունը կրող «Վարդապետու-  
թիւն» մը, եւ անով կ'երաշխարէր Յունաստանի եւ Թուրքիոյ հո-  
ղային ամբողջականութիւնը: Այս եղած էր իբր արդիւնք «Յուրտ  
պատերազմին», որ կարելի է սկսած սկսել Զբոյճիի 1946 թ.ի Մար-  
տին Ֆուլթընի մէջ խօսած ճառով, ուր «երկաթէ վարագոյր» ա-  
սոյթը առաջին անգամ ըլլալով դորձածուած էր: Այդ շրջանին ա-  
րեւմտեանները մտահոգ էին արեւելեան Եւրոպայի մէջ համայնա-  
վարական վարչաձեւերու հաստատումով, Յունաստանի քաղաքա-  
ցիական կռիւններով, Մեհապատի (Հիւս. Իրան) Քրտական հանրա-  
պետութեան հարցով, եւ արեւմտեան Եւրոպայի մէջ նշմարուող  
խլրտումներով: Ասկէ օգտուողը եղաւ հակա-սովետ Թուրքիան եւ  
ձախողեցաւ հայկական դատին համար ստեղծուած նպաստաւոր ա-  
ռիթը: Հայկական արդար ազգային բաղձանքները արեւմտեան պե-  
տութեանց կողմէ տարբեր տեսանկիւնէ կը դիտուէին: Հայկական  
ՍՍՀ-ին (հուսկ ՍՍՀՄ-ին) կցուած թիզ մը թրջական հող պիտի  
նշանակէր ՍՍՀՄ-ի քաջալերանք մը, մանաւանդ այն օրերուն, երբ  
Արեւմտեանները լծուած էին «համայնավարութեան ծաւալումը  
զսպելու» քաղաքականութեան:

42. Գեքամ Անարանեան, Մեծ Երազի ճամբուն Վրայ, Պէյրութ 1964,

«Թրումբնեան վարդապետութեան» հռչակումէն ետք երբ հայկական Քոնկրէսի կողմէ պատուիրակութիւն մը՝ 12 Մայիսի 1947-ին, Ամերիկայի արտաքին գործոց Գարտուղար Տին Էչխարնի կը ներկայանար, այս վերջինը կը խօսէր «այն մեծ դժուարութեանց մասին, որոնք կային հայոց խնդրոյն լուծման ճամբուն վրայ, ամերիկեան կառավարութեան քաղաքական ուղղութեան տեսակէտէն» (43) :

Արեւմտեաններ գոհ էին որ Կարսն ու Արտահանը չէին կըցւած ՍՍՀՄ-ի: Այս մէկը կը հաստատեն 1957 թ.ի աշնան ՄԱԿ-ի Ամերիկեան պատուիրակ՝ Հենրի Քեպլթ Լաճի խօսքերը, երբ Ապահովութեան Պորհուրդը կը քննէր Սուրիական բողոքը Թուրքիոյ դէմ: Թուրքիան դովարանելէ եւ յայտնելէ ետք թէ «ԱՄՆ հիացումով կը խոնարհի թուրք զինուորներու քաջ ծառայութեան» Գորէայի մէջ, թէ «ՄԱԿ-ը կընայ հպարտ ըլլալ Թուրքիայով», իր ճառին մէջ ԱՄՆ-ի պատուիրակը երկու անգամ ուրախութեամբ կը նշէր «Սովետական Միութեան ձախողանքը իր պահանջը յաջողեցնելու՝ որ Թուրքիան ՍՍՀՄ-ի կցէր Կարս եւ Արտահան նահանգները» (44) :

Սովետ Միութիւնը, առաւել մտահոգ էր նեղուցներու օրինալիճակով: 1946 թ.ի 7 Օգոստոսին եւ 24 Սեպտեմբերին, ՍՍՀՄ, երկու պաշտօնադրերով, որոնք կը հիմնուէին Փոցտամի որոշումներուն վրայ, 1936 թ.ի Մոնթրոյի համաժողովի որոշումներու վերանայումը կը պահանջէր: Գալով Կարսի եւ Արտահանի հարցին՝ ՄԱԿ-ի Լէյք Սաքսեսի Գաղաքական Պորհուրդի առաջին յանձնախումբի 25-րդ նիստին՝ 24 Հոկտեմբերի 1947-ին, ՍՍՀՄ-ի պատուիրակ Վիշինսքի խօսքը ուղղելով թրքական պատուիրակ Սելիմ Սարփէրին, կը յայտարարէր թէ Կարսը եւ Արտահանը վրացական ըլլալով պէտք էին վերադարձուիլ Սովետական Վրաստանին: Կամաւոր կամ ակամայ կերպով Ս. Հայաստանի պահանջքին չյիշուելուն այս պատճառները (վրէպում, դիպուած թէ՞ դիտումնաւոր), մանաւանդ երբ զանգուածային հայկական ներգաղթի շարժման երկրորդ տարիի վերջաւորութեան կ'ըլլային, ցարէ անյայտ են (45) :

Կարս եւ Արտահանի պահանջը ատկէ ետք դրեթէ չյիշատակւեցաւ միջազգային առումով ու «Անհատի պաշտամունքի» շրջանի

43. Նայն:

44. «Soviets plot war scare», U.S.I.S. pamphlet, distributed in Beirut in 1957, p. 3-4, 5 and 7.

45. Atamian, Sarkis, The Armenian Community, Now York, 1955, p. 409.

դառնութիւնները, որոնք իրենց դադարեցնակէտին հասան 1949 թ.ի Յուլիսին, ճաշակեց Հայկական ՍՍՀ-ը: Մինչ այդ՝ Թուրքիան ՆԱԹՕ-ին անդամակցեցաւ 1952 թ.ին եւ քիչ ետք՝ Պաղատաւի Ուխտին: Արդէն 1950 թ.ի արեւմտեաններու եռակողմանի յայտարարութեամբ, Թուրքիոյ հողային ամբողջականութիւնը Միջին Արեւելքի բոլոր տէրութեանց հետ կրկին կ'երաշխաւորուէր: 1951 թ.ի Փետրուարին անդլեւՖրանս ու Թրքական համաձայնութիւնը նոր ապահովութիւն ու երաշխիք կը խոստանար Թուրքիոյ:

1947-1963 թթ. ամերիկեան օդնութիւնը Թուրքիոյ՝ կը հասնէր 4.352 միլիոն տոլարի, որպէս նուէր, պարտքի տրուած գումար կամ սպառազինում: Սպառազինումի յատկացումը միայն 2.488 միլիոն տոլար էր: Անշուշտ փոխարէնը Թուրքիա իր հողամասին վրայ թոյլատրած էր ամերիկեան ռազմախարխսիւններու հաստատումը (46):

Ստալինի մահէն քանի մը ամիս ետք, 30 Մայիսի 1953-ին, Սովետական կառավարութիւնը Մոսկուայի մէջ Թրքական դեսպանին պաշտօնադրով մը կը յայտնէր թէ «քանի վրացական եւ Հայկական Սովետական հանրապետութիւնները յետս կը կոչէին Թուրքիայէն իրենց հողային պահանջները, որ քանի մը տարի առաջ բրած էին», ուրեմն՝ «Սովետական Միութիւնը հողային ոչ մէկ պահանջ ունէր Թուրքիայէն» (47): Նոյն տարուան Յուլիսի 19-ին, Մոլոթով կը կրկնէր նոյն միտքը: Այսպէս՝ Հայկական դատի միջադաշին գեանի վրայ ունեցած յոյսը կը կորսուէր:

1953 թ.ի ամբան, վարչապետ Մալենքով կը յայտարարէր թէ ՍՍՀՄ-ը պատրաստ էր Թուրքիոյ հետ խօսակցելու երկու երկիրները շահագրգռող կարեւոր հարցերու շուրջ: Իսկ Անդարայէն՝ 17 Օգոստոսի 1953 թուակիր ԱՖՓ-ի մէկ հեռագիրը կը յայտնէր թէ ՍՍՀՄ-ը նեղուցներու եւ կարսի ու Արտահանի պահանջներէն հրաժարած ըլլալով խօսակցելիք «կարեւոր հարցեր» չկային (48): ՍՍՀՄ, որ միակողմանիօրէն եւ առանց ոեւէ խօսակցութեան վրայ հողային իր պահանջներէն հրաժարած էր, չկրցաւ իր ակնկալածը ապահովել: Թուրքիա մնաց ՆԱԹՕ-ի անդամ եւ իր ազգային հողամասը ծառայել տուաւ որպէս ռազմախարխսիս այդ կազմակերպութեան, եւ երկու երկիրներու՝ ՍՍՀՄ-ի եւ Թուրքիոյ յարաբերութիւնները մինչեւ 1963 «ձգտուած» էին բայց ոչ «լարուած» 1945 թ.էն 1953-ի շրջանին նման:

46. «L'Orient», Beyrouth, 29 Avrill 1965.

47. Keesing's Contemporary Archives (1953), 13101c.

48. «L'Orient», Beyrouth, 18 Août 1953.

Ս. Հայաստանի Գերադոյն Խորհուրդի այդ շրջանի նախա-  
դահուլթեան նախադահ՝ Շմաւոն Առուշանեան, 5 Օգոստոսի 1955-ին  
կը յայտարարէր. (ըստ ԹՄՍՍ գործակալութեան հեռադրալուրեր  
թիւ 168) «Սովետ կառավարութիւնը կը ցանկայ, որ բարի դրաց-  
նութեան յարմար յարաբերութիւններ հաստատուին դրացի թուրք  
ժողովուրդին հետ: Ազատութեան սիրահար հայ ժողովուրդը խան-  
դավառօրէն կը հաստատէ սովետ կառավարութեան արտաքին խա-  
ղաղասէր քաղաքականութիւնը» (49):

Նոյն ատեն «Սովետական Հայաստան» պաշտօնաթերթի 7 Օ-  
գոստոսի 1955 թ.ի թիւին մէջ կը գրուէր. «Անհրաժեշտ ենք հա-  
մարում յայտարարել, որ մենք ցանկանում ենք որ մեր հարեւան  
թուրք ժողովուրդի հետ հաստատուին, լաւ, բարի դրացիական  
յարաբերութիւններ: Սովետական Միութիւնը բազմիցս իր նախա-  
ձեռնութիւնն է ցուցաբերել այդ ուղղութեամբ: Մենք սպասում  
ենք, որ այդ բարի նախաձեռնութիւնը բարեացակամ արձագանդ կը  
դտնի նաեւ թրքական կողմից» (50):

Այսուհանդերձ թուրք եւ սովետ յարաբերութիւնները ձգտը-  
ւած մնացին եւ նոյնիսկ վատթարացան 1957 թ.ի աշնան Սուրիա-  
թրքական տաղնապին, սակայն վարչապետ Մենտերեսի իշխանու-  
թեան վերջին շրջանին որոշ մեղմացում մը նշմարելի եղաւ: 1962  
թ.ի Քուպայի խնդրով Սովետ եւ Ամերիկեան վէճին, Խրուշչեւ իբր  
պայման Քուպայէն հռթիւներու ետ բերուելուն պահանջած էր  
թուրքիոյ մէջ ամերիկեան խարխսիւններուն քակուիլը, ինչ որ սա-  
կայն տեղի ունեցած չէր:

Այսուհանդերձ սառցահալ մը սկսաւ սովետ եւ թուրք յարա-  
բերութիւններուն մէջ եւ փոխադարձ պաշտօնական պատուիրակու-  
թիւններ Մոսկուա եւ Անքարա այցելութիւններ տուին:

1963 թ.ի Յուլիսին, թրքական խորհրդարանական պատուիրա-  
կութիւն մը պաշտօնական այցելութիւն մը կու տար Մոսկուա, որու  
ընթացքին Սովետ արտաքին գործոց նախարարութեան մէջ վար-  
չապետ Խրուշչեւ ի միջի այլոց կը յայտնէր թէ վերջին շրջանին  
թուրք-սովետական յարաբերութիւնները պաղած էին, որուն նը-  
կատմամբ ներկայ իշխանութիւնը անմեղ էր, քանի հողային պա-  
հանջները Ստալինի եւ Բերիայի թշնամական զգացումներուն ար-  
դիւնքն էին եւ այդ շրջանին կը պատկանէին:

49. «Այգ» օրաթերթ, Պէյրութ, Գ. Տարի Թիւ 796, 29 Սեպտեմբեր 1955.  
ա. էջ:

50. «Սովետական Հայաստան» օրաթերթ, Երեւան, 7 Օգոստոս 1955:

1964 թ.ի նոյեմբերին, Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մոսկուա կ'այցելէր Կիպրոսի հարցով Սովետ կառավարութեան համակրանքը շահիլ փորձելու նպատակով: Այդ առիթով Թուրքիոյ «հողային ամբողջականութեան» ՍՍՀՄ-է յարգուելու կէտը կը նշուէր այցելութեան աւարտին պատրաստուած հաղորդագրութեան մէջ:

1964 թ.ին, սովետ եւ Թուրք միացեալ հաղորդագրութիւնը կ'ըսէր. «Թուրքիա եւ Սովետ Միութեան համաձայն են ամէն ճիշդնելու, որպէսզի ամրապնդուին բարի-դրացիական յարաբերութիւններ՝ հիմնուած անկախութեան, հաղային ամբողջականութեան (ընդգծումը մեզմէ Չ. Մ.) եւ իրաւունքներու հաւասարութեան վրայ»: 4 Յունուարի 1965 թ.ին ՍՍՀՄ-ի Կոմկուսի Կեդր. Կոմիտէի շրջանի քարտուղարը՝ Նիքոլայ Փոտկորնի, Անքարայի մէջ փոխադարձ այցելութեան ատեն կը յայտարարէր. «Սովետ եւ Թուրք սահմանը կոչուած է դառնալու բարեկամութեան ամրապնդման խորհրդանշանը...», «ՍՍՀՄ ոչ մէկ պահանջք ունի Թուրքիայէն, մեզի համար ոչ մէկ պատճառ գոյութիւն ունի վիճարանելու, սակայն բազմաթիւ հարցեր կրնան մեզ միացնել (ընդգծ. մեզմէ Չ. Մ.)»: Այս յայտարարութիւնները ինքնին կը շեշտեն Թուրքիոյ ղեկավարութեան մտավախութիւնը, որ կը դրսեւորուի «հողային ամբողջականութեան» բանաձեւը տեւականօրէն սովետ եւ Թուրք միացեալ հաղորդագրութիւններու մէջ մտցնելու ցանկութենէն:

18 Մայիսի 1965-ին, ՍՍՀՄ-ի Արտաքին Գործոց նախարար Անտրէ Կրոմիքօն Թուրքիա իր այցելութեան ատեն կ'ըսէր թէ պէտք է «Աթաթիւրքի եւ Լենինի օրինակին հետեւիլ» երկու երկիրներու փոխ-յարաբերութեանց մէջ:

1965 թ.ի Օդոստոսին, Թուրքիոյ վարչապետ Սուատ Իւրկիւլիւ Մոսկուա իր այցելութեան աւարտին հրատարակուած միացեալ հաղորդագրութեան մէջ «հողային ամբողջականութեան» հարցը անգամ մըն ալ նշել կու տար: Հետագային երբ ՍՍՀՄ-ի վարչապետ Քոսիկին Թուրքիա փոխադարձ այցելութեան կու դար, «Ենի Կազեթէ» թերթը կը գրէր թէ կողմերը փոխանակ թշնամական ըզղացումներու, որոշած են փոխադարձ հասկացողութեան, հողային ամբողջականութեան եւ սղզային գերիշխանութեան հիմերուն վերայ դնել իրենց փոխ-յարաբերութիւնները (51):

51. «L'Orient», Beyrouth, 11 Janvier 1967.

Բացայայտ է թէ Կարսի եւ Արտասանի կամ «Հողային ամբողջականութեան» այս խնդիրը թուրքերու մնայուն մտավախութիւններէն մէկն է: Երբ 1969 թ.ի Յունուարին, Անքարայէն Մոսկուա մեկնած էր թրքական պատուիրակութիւն մը արտաքին դործերու բարձր պաշտօնեայի մը գլխաւորութեամբ, ՄՍՀՄ-ի հետ իր սահմանային կարգ մը կէտերու վրայ բարեփոխութիւններ ընելու եւ յետոյ՝ նոյն տարուան Մայիսին սովետ պատուիրակութիւն մը Անքարա եկաւ նոյն նպատակով, թուրք թերթերէն «Սապահ» իր 29 Յունիսի 1969-ի թիւին մէջ գրեց. «... Ռուսերը սկսան թուրքիայէն Հող պահանջել: 1969 թ.ի սկիզբը, այս ուղղութեամբ առաջին ձեռնարկը կատարեցին թուրքիոյ մօտ: Ելան ըսելու թէ թուրք եւ ռուս սահմանը արդարամտութեամբ ճշդուած չէ, հետեւաբար նոր սահմանադրուի մը պէտք է դժեւ: Բուն պահանջը տարբեր բան է սակայն, Ռուսիա կը պահանջէ Կարսը եւ Արտասանը, յայտնի է որ անոնց զանազան դատիւները իր Հողերուն կցել կ'ուզէ: Թուրք կառավարութիւնը պազարիւնով դիմաւորեց այս ծիծաղելի պահանջը, խստիւ մերժեց զայն եւ պատասխանեց թէ թուրք եւ ռուս սահմանը անփոփոխ պիտի մնայ...» (52):

Այս լուրին վրայ թուրքիոյ արտաքին դործոց նախարարութեան տեղեկատու դիւանը ստիպուեցաւ հրատարակել հերքում մը՝ ըսելով. «Նախարարութիւնը կը հերքէ «Սապահ» թերթին այն լուրը թէ՛ «Ռուսիա թուրքիայէն պահանջեր է Կարսը եւ Արտասանը»: Այս լուրը ամբողջովին հակառակ է իրողութեան: Ռուսիա ոչ մէկ ատեն դիմած է թուրքիոյ, սահմաններու սրբազրութիւն պահանջելով: Թուրք եւ Ռուս սահմանադրուիւր ճշդուած էր 1921 թ.ին, Կարսի եւ Մոսկուայի դաշնագիրներով: Այս մասին նոր համաձայնագիր մը ստորագրուեցաւ 28 Փետրուարի 1967-ին եւ 5 Յուլիսի 1968-ի համաձայնութեամբ, որոշուեցաւ մանրամասնօրէն ճշդորոշել թուրք եւ Սորհրդային սահմանագիծը, տրուած ըլլալով որ 1926-ին պատրաստուած աշխարհագրական քարտէսները չեն համապատասխաներ մեր օրերու թեքնիք պայմաններուն: Այս նպատակաւ կազմուած է թուրք եւ Սորհրդային խառն յանձնաժողով մը եւ 20 Յունուարի 1969-ին Մոսկուայի մէջ աշխատանքներ սկսած են եւ ներկայիս կը շարունակուին երկու երկիրներու սահմաններուն վրայ» (53):

52. Յովհ. Պօղոսեան, Սորհրդային եւ թուրք Սահմաններու վրայ, «Զարթօնք» օրաթերթ, Պէյրութ, 20 Յուլիս 1969, էջ 2:

53. Նոյն:

Այդ շրջանին երեւանէն եկող յամառ զրոյցներ շրջեցան թէ Անիի հարցը կրկին սեղան բերուած է Հայկական պահանջով, ապա՝ Հայկական ՍՍՀ-ն առաջարկած է Հայկական ՍՍՀ-ի Ամասիոյ թրքարնակ շրջանը փոխանակել Թուրքիոյ ենթակայ Անիի շրջանին հետ եւ ի հարկին՝ առաջարկած է դնել դայն. բայց մերժուած է: Սոյն տեղեկութիւնները բնաւ չհաստատուեցան, բայց յատկանշական են թէ պահանջներու դիտակցութիւնը միշտ արթուն է:

«Սովետական Հայաստան» պաշտօնական օրաթերթի 22 Նոյեմբերի 1969-ի թիւին մէջ՝ «Սովետ եւ Թրքական համատեղ կոմիւնիկէ» մը հրատարակուած էր թուրք եւ սովետ հանդիպումի մը առիթով, որ կ'ըսէր. «Ճերկկողմ յարաբերութիւնների հարցերը քննարկելիս երկու կողմերը դժուարակութեամբ արձանագրեցին բարի դրացիական յարաբերութիւնների անշեղ բարելաւումը եւ հաւաստեցին իրենց վճռականութիւնը՝ շարունակելու ջանքերը, նպատակ ունենալով աջակցել այդ զարգացմանը այնպիսի վստահութեան մթնոլորտում, որը հիմնուած լինի անկախութեան, սուվերենութեան, տերիտորիալ ամբողջականութեան (ընդգծ. մեղմէ Զ. Մ.), իրաւահավասարութեան սկզբունքների յարգման ու ներքին գործերին փոխադարձաբար չմիջամտելու սկզբունքին վրայ» (54): Ինչպէս կը տեսնուի Թուրքերը միշտ «հողային ամբողջականութեան» հարց կը յարուցանեն:

Մեծ Եղեռնի Յիսնամեակի տարիէն սկսեալ, Մայր Հայրենիքի մէջ Ծիծեռնակաբերդի Յուշարձանին եւ Սարղարապատի Յուշարձանի կառուցումով ու հայկական հարցի շուրջ պատմական ուսումնասիրութիւններու հրատարակութեամբ ու ժողովրդային ցոյցերով, միւս կողմէ՝ Սփիւռքի մէջ յուշարձաններու կառուցումով, ցոյցերով, յուշագիրներով ու հրատարակութիւններով, Թուրքիան որոշ չափով մտահոգ է:

1967 թ.ի Փետրուարին եւ 1970 թ.ի Ապրիլին, Թուրքիոյ Ազգ. Ապահովութեան Պորհուրդը, սփիւռքահայութեան թուրքերու բռնադրակած հողերու պահանջով ու յարակից հարցերով մտահոգ՝ իր ժողովներու նիւթ ըրած է հայկական շարժումները: Առ այդ յիշատակելու է կրկին ՍՍՀՄ-ի հետ իր համաձայնագիրը՝ 28 Փետրուարի 1967-ին սահմանադժուծի առնչութեամբ:

Համաձայն մամուլին՝ յատկանշականօրէն 1970 թ.ի «Ապրիլ 24-ին, Թուրքիոյ Ազգ. Ապահովութեան Պորհուրդը, Չանգայայի

54. «Սովետական Հայաստան» օրաթերթ, Երևան, 22 Նոյեմբերի 1969:

մէջ չորս ու կէս ժամ տեւող ժողով մը գումարած է հանրապետութեան նախարհ Ճեյտէթ Սունայի նախադահութեան տակ: Ժողովին մասնակցած են վարչապետ Սիւլէյման Տեմիրէլ, խորհուրդին անդամակցող նախարարներ, սպարապետ Զօր. Թաղմաշ, բանակի հրամանատարներ, եւ Ազգ. Այասնուլութեան խորհուրդի ընդհանուր քարտուղարը: Աջի եւ ձախի պայքարի, փողոցային կռիւներու եւ այլ հարցերու շարքին, իրրեւ հրատապ հարց, օրակարգի նիւթ դարձած է նաեւ Հայկական Հարցը (ընդգծ. մեղմէ Զ. Մ.)» (55):

#### ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Աթաթիւրք՝ 1927 թ.ի Հոկտեմբերին, Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովին առջեւ խօսած իր ճառին մէջ կ'անդրադառնայ հայկական հարցին եւ բաղդատականը կ'ընէ 1920 թ.ի Սեւրի եւ 1921 եւ 1922 թթ. առաջարկներուն: Ան կը նշէ Թուրքիոյ կորսնցնելիք հողամասերը Սեւրով եւ «հայկական օճախ»ի կազմութեան դադարը 1921-1922 թթ.ուն եւ կ'եզրակացնէ. Լոզանի մէջ «այս հարցը յետաձգուեցաւ» (56): Արդ՝ Լոզանի դաշնագիրը երբեք չ'անդրադառնար հայկական հարցին: Պէտք չէ մոռնալ որ Լոզանի դաշնագիրը Հայաստանի կողմէ չէ ստորագրուած, ոչ ալ ՍՍՀՄ-ի եւ Ա. Մ. Ն.ի կողմէ: Գալով Մոսկուայի եւ Կարսի 1921 թ.ի դաշնագրերուն, տեսանք թէ ինչպէս 1945 թ.ին անոնք խնդրոյ առարկայ ենդան:

Հայկական հարցը կարելի չէ մեռած հարց մը նկատել, թէեւ ներկայ քաղաքական իրադրութեան մէջ այժմէական հարց մը չէ, այլ՝ «սատեցուած անլոյծ հարց մը», որ աշխարհ իրմով զրեթէ չի դրաղեցներ: Այսուհանդերձ սփիւռքահայ հաւաքականութիւններու ջանքերը մանաւանդ Մեծ Եղեռնի Յիսնամեակի տարիէն (1965 թ.) սկսեալ պատճառ կ'ըլլան միջազգային մամուլի անցողակի անդրադարձին:

55. «Ազգակ» օրաթերթ, Պէյրուք, ԽԴ. Տարի, Թիւ 52, 7 Մայիս 1970:

56. A speech delivered by Ghazi Mustafa Kemal, October 1927, Leipzig, 1929, p. 609.

## THE QUESTION OF THE WESTERN ARMENIAN TERRITORIES 1921-1971

ZAVEN MESSERLIAN

This study aims to corelate the historical facts between 1921-71 in relation to the occupied western Armenian territories now in Turkey, mainly in relation to the districts of Kars and Ardahan. At the same time the policies of the concerned nations, Turkey, U.S.S.R. and the U.S.A. are presented. Before the discussion of the main topic, a bird's eye view is given of the 1045-1918 period in relation to the territorial occupation of Western Armenia successively by Seljuk, Persian and Ottoman Turkish forces. Then comparatively a larger space is devoted to the discussion of the facts and policies affecting the Western Armenian territories and in particular the districts of Kars and Ardahan, during 1918-1921.

The main study starts with a brief discussion of the Treaty of Kars (1921), Soviet-Turkish relations during 1921-1939, Turkey's pro-Anglo-French and then pro-German policy is dealt with, followed by the attitude of the Allied Nations towards Turkey during the Second World War. The Soviet claims on Kars and Ardahan in 1945 in the name of Armenia and Georgia and the relations of Turkey and the Western powers are presented. Then the declaration of the Truman doctrine in 1947 guaranteeing the territorial integrity of Turkey, thus putting a great obstacle on the way of the realization of Armenian hopes of the retrocession of the district of Kars, is given. The renunciation of the Soviet territorial claims in 1953 and the subsequent Turkish-Soviet relations between 1953-1971 with particular emphasis on the period 1963 to 1971 is discussed. During this period Turkey's constant demands to have their territorial integrity respected by the U.S.S.R. is reflected in the joint communiques.